Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 2-4-ը Ռուսաստանի Դաշնություն (Յարոսլավի մարզ) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը**

Աշոտ Ղահրամանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

ՀՀ Արմավիրի մարզպետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Ռուսաստանի Դաշնության Յարոսլավի մարզ, 2017 թվականի սեպտեմբերի 2-ից 4-ը

4. **Հրավիրող կողմը**

Ռուսաստանի Դաշնության Յարոսլավի մարզի հայ համայնք

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Մասնակցելու հայ համայնքի կողմից կազմակերպվող մշակութային միջոցառմանը, այն է՝ Հայկական եկեղեցու բացման և օծման արարողությանը:

6. **Քննարկված թեմաները**

Հայ համայնքի առջև ծառացած խնդիրները, տեղական և մարզային իշխանությունների կողմից հնարավոր աջակցության հարցերը:

Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարարության կողմից Արմավիրի մարզի առողջապահական հաստատություններին սարքավորումներով հնարավոր աջակցության հարցերը:

Տեղի հայ գործարարների Արմավիրի մարզում իրականացվող ներդրումային ծրագրերին հնարավոր մասնակցության հարցերը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Հանդիպումներ տեղի ունեցան հայ համայնքի ակտիվի, տեղական և մարզային իշխանությունների ներկայացուցիչների, Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարարի առաջին տեղակալի և Մոսկվայի հայ գործարարների հետ:

Եկեղեցու բացման արարողությանը ողջույնի խոսքով հանդես եկավ նաև Արմավիրի մարզպետը: Տեղական և մարզային իշխանությունների հետ քննարկվեցին հայ համայնքին հնարավոր աջակցության հարցերը:

Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարարի առաջին տեղակալի հետ քննարկվեցին <<Արմավիրի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ին վերջինիս կողմից ղեկավարվող գերատեսչական մարմնի կողմից համապատասխան սարքավորումներով աջակցելու հարցերը:

Հայ գործարարների հետ քննարկվեցին հայրենիքում հնարավոր ներդրումային ծրագրերով մասնակցության հարցերը:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Յարոսլավի մարզի տեղական և մարզային իշխանությունների ներկայացուցիչների հետ ձեռք բերվեց պայմանավորվածություն իրենց իրավասությունների շրջանակներում հայ համայնքի ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցերին ցուցաբերելու ցանկացած անհրաժեշտ աջակցություն:

Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարարի առաջին տեղակալը հավաստեց, որ հարցը իր գերատեսչությունում կքննարկվի և արդյունքների վերաբերյալ կհայտնվի Արմավիրի մարզպետարան:

Հայ գործարարների հետ բանակցությունների ընթացքում վերջիններս ցանկություն հայտնեցին ծանոթանալու մարզում իրականացվող ծրագրերի նախագծերին, որոնք կառաքվեն նրանց:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Համապատասխան գործառույթները, դրանց իրականացման ժամկետները կհամաձայնեցվեն էլեկտրոնային եղանակով մարզպետարանի աշխատակազմի առողջապահության վարչության, իրավաբանական և զարգացման ծրագրերի և վերլուծության բաժինների միջոցով:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***

11.09.2017 թվական